ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԼԻԳԱՆ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ՊԱՅՔԱՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՄԱՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ (1945—1956)

ՇԱՀԵՆ ԿԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆ

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Արաբական արևելքում նոր թափով ծավալված ազգային-ազատագրական շարժման կարևորագույն բաղադրամասերից մեկը եգիպտական ժողովրդի պայքարն էր երկրի անկախության և Եգիպտոսից անգլիական զորքերի դուրս բերման համար։ Ջնայած այն բանին, որ դեռ 1922 թ. Եգիպտոսն անկախ պետություն էր հռչակվել, նրա անկախությունն ուներ ձևական բնույթ[1]։ Ճիշտ է, 1936 թ. անգլո-եգիպտական պայմանագիրը «որոշակի առաջընթաց քայլ էր Եգիպտոսի լրիվ անկախության նվաճման ճանապարհին», սակայն, այնուամենայնիվ, նույն պայմանագրով «Անգլիան պահպանում էր իր քաղաքական և տնտեսական տիրապետությունը, իսկ անգլիական զորքերը դեռ շարունակում էին օկուպացնել Եգիպտոսը»[2]։ Սկսած 1945 թ. Եգիպտոսից անգլիական զորքերի դուրս բերման և երկրի ամբողջական քաղաքական անկախության նվաճման հարցը դրվեց նոր սրությամբ։ Այդ խնդիրը բազմիցս քննարկվեց նաև 1945 թ. ստեղծված Արաբական երկրների լիգայում։

1945 թ. վերջին—1946 թ. սկզբին Եգիպտոսում համաժողովրդական ելույթներ տեղի ունեցան՝ անգլիական զորքերի անհապաղ դուրս բերման պահանջով։ Իրենց զանգվածայնությամբ առանձնապես աչքի ընկան 1946 թ. փետրվարի 21-ին տեղի ունեցած ցույցերը։ Հենց այս շրջանից սկսած անգլո-եգիպտական կոնֆլիկտին սկսեց անդրադառնալ նաև Արաբական երկրների լիգան։ 1946 թ. մարտի 1-ին հրապարակվեց Լիգայի գլխավոր քարտուղար Աբդառռահման Ազզամի հայտարարությունը, որում նշվում էր, որ «արաբական երկրներն ու արաբ ժողովուրդը կանգնած են Եգիպտոսի կողքին ոչ միայն այն պատճառով, որ նրանք արաբ են, այլ նաև, որ իրենք համոզված են էվակուացիայի (անգլիական զորքերի—Շ. Կ.) վերաբերյալ եգիպտական ժողովրդի ու կառավարության պահանջի իրավացիության մեջ»[3]։ Հայտարարությունում մերկացվում էր անգլիական քաղաքագետների այն փաստարկը, թե Եգիպտոսում անգլիական զորքերի ներկայությունն իբր պայմանավորված է Մերձավոր արևելքի խաղաղությունը պաշտպանելու ձգտումով։ Նրանում շեշտվում էր, որ ռեգիոնի «կայունությունն ու խաղաղությունը չպետք է իրականացվի ժողովրդի կամքին հակառակ Կահիրեի միջնադարյան միջնաբերդում, Սուեզի ջրանցքում և արաբական այլ երկրներում զորամիավորումներ պահելով»[4]։ Հայտարարությունում նաև ասվում էր, որ «հին գաղութարարական և իմպերիալիստական դրույթները... կործանարար են արաբական և մահմեդական երկրներում Մեծ Բրիտանիայի իրական և կենսական շահերի համար»[5]։

1946 թ. մարտի 25-ին Արաբական երկրների լիգայի խորհուրդը, անդրադառնալով անգլո-եգիպտական կոնֆլիկտին, միաձայն որոշեց պաշտպանել

---

1 Б. Г. Сейранян, Египет в борьбе за независимость. 1945—1952, М., 1970. с. 4.

2 *Նույն տեղում, էջ 4—5։*

3 „Cahiers de l'orient contemporain", Paris, 1946, v, p. 13.

4 *Նույն տեղում։*

5 *Նույն տեղում, էջ 13—14։*

Եգիպտոսի պահանջները[6]։ Այս քայլերը ցույց էին տալիս, որ արաբական երկրները Եգիպտոսի մղած պայքարին համաարաբական նշանակություն էին տալիս։

Վախենալով եգիպտական ազգային-ազատագրական շարժման վերելքից, ինչպես նաև հաշվի առնելով անգլո-եգիպտական կոնֆլիկտի արձագանքներն Արաբական արևելքում, Անգլիան ստիպված եղավ բանակցություններ վարել Եգիպտոսի հետ։ Սակայն 1946 թ. ապրիլ-մայիսին տեղի ունեցած անգլո-եգիպտական բանակցությունների առաջին փուլն ավարտվեց անարդյունք։ Նույն թվականի մայիսի վերջին Ինշասում տեղի ունեցավ Արաբական երկրների լիգայի անդամ պետությունների ղեկավարների բարձր մակարդակի հանդիպում, որի ընթացքում քննարկվեց նաև անգլո-եգիպտական հարաբերությունների հարցը։ Ինշասի խորհրդաժողովի ավարտից հետո հրապարակված հայտարարություններում արաբական երկրները մի անգամ ևս հավաստեցին Եգիպտոսի պահանջները պաշտպանելու իրենց ցանկությունը, միաժամանակ ողջունելով անգլիական կառավարության խոստումը՝ իր զորքերը Նեղոսի հովտից դուրս բերելու մասին[7]։ Իրոք, 1946 թ. մայիսի 7-ին Անգլիայի վարչապետ Էթլին հայտնել էր անգլիական զորքերը եգիպտական տարածքից դուրս բերելու իր կառավարության ցանկության մասին, այն պայմանով, որ եգիպտական կառավարությունը հնարավորություն տա «արտակարգ պայմանների դեպքում զորքերը անհապաղ վերադարձնել դեպի այդ շրջան»[8]։ Հունիսի 8-ից 13-ը Բլուդանում տեղի ունեցած Արաբական երկրների լիգայի խորհրդի նստաշրջանը հաստատեց Ինշասում ընդունված որոշումները։ Միաժամանակ խորհուրդն անհանգստություն հայտնեց «անգլո-եգիպտական բանակցությունների ընդմիջվելու առթիվ» և հայտարարեց, որ, «եթե չբավարարվեն Եգիպտոսի բոլոր պահանջները, ապա անգլո-արաբական բարեկամությունն այլևս չի կարող շարունակվել»[9]։ Ինչպես տեսնում ենք, Ինշասում և Բլուդանում ընդունված որոշումներում Եգիպտոսի պահանջների պաշտպանության հետ մեկտեղ առկա էր Լոնդոնի հետ բարեկամական հարաբերություններ պահպանելու ցանկությունը։ Այդ պատճառով էլ Բլուդանում հաստատված փաստաթուղթը չընդունվեց սիրիացի կոմունիստների «Սաութ աշ-Շաաբ» թերթում։ Ինչպես նշում էր լրագիրը, փաստորեն «Արաբական երկրների լիգան հաշվի չի առնում եգիպտական հանրային կարծիքը, որը դժգոհ է բանակցություններից և պահանջում է եգիպտական հարցը դնել Անվտանգության խորհրդում»[10]։ Ճիշտ էր նաև թերթի այն պնդումը, որ «լիգայի հայտարարությունը շատ կարևոր և նշանակալի կլիներ, եթե չուղեկցվեր վերապահումներով»[11]։ Արաբական երկրների լիգայի դիրքորոշման այսպիսի ավելորդ վեհերոտությունը շատ բանով պայմանավորված էր նրանով, որ այդ շրջանում Եգիպտոսում իշխանությունը գտնվում էր ծայրահեղ հետադիմական, անգլոմետ ուժերի ձեռքում։ Նրանց քաղաքական գիծը դժգոհություն էր առաջացնում նույնիսկ ոչ արմատական հայացքներ ունեցող քաղաքական շրջանակներում։ Եգիպտոսի վարչապետ Ի. Սիդկիի կառավարության այդ օրերի գործունեության տրամաբանական ավարտը եղավ 1946 թ. հոկտեմբերի 25-ին Սիդկիի և Անգլիայի արտաքին գործերի մինիստր Է. Բևինի միջև անգլո-եգիպտական նոր պայմանագրի ստորագրումը։ Այդ պայմանագրի դրույթները, սակայն, այն աստիճան չէին համապատասխանում Եգիպտոսի ազգային շահերին, որ ժողովրդական

---

6 *Նույն տեղում, էջ 15*; Центральный государственный архив Октябрьской революции (*այսուհետև՝* ЦГАОР), ф. 4459, оп. 27/1, д. 5441, л. 68.

7 M. Laissy, Du panarabisme à la Ligue arabe, Paris. 1948, p. 235—236.

8 В. Б. Луцкий, Англо-египетский конфликт перед Советом Безопасности, М., 1947, с. 11—12.

9 M. Laissy, *Նշվ. աշխ.*, *էջ* 240։

10 ЦГАОР, ф. 4459, оп. 27/1, д. 5441, л. 157.

11 *Նույն տեղում։*

լայն զանգվածների ճնշման ներքո 1946 թ. դեկտեմբերի 9-ին Սիդկին ստիպված եղավ հրաժարական տալ։ Սիդկիի կառավարության, ինչպես նաև Սիդկի—Բևին պայմանագրի «տապալման անմիջական պատճառ դարձավ Սուդանի հարցը»[12]։ Դեռ XIX դ. վերջից Սուդանը ձևականորեն գտնվում էր անգլո-եգիպտական միասնական կառավարման ներքո, սակայն, իրականում, այնտեղ տնօրինում էին անգլիացիները։ Եգիպտական ազգային-ազատագրական շարժումը երկրից անգլիական զորքերի դուրս բերման հարցը դիտում էր «Նեղոսի հովտի միասնության», այն է՝ Եգիպտոսը և Սուդանը մեկ պետությունում միավորելու գաղափարի հետ անխզելիորեն կապված։ Ընդ որում, Սուդանի ազգային-ազատագրական շարժման առաջադիմական թևը նույնպես սկզբունքորեն հանդես էր գալիս Եգիպտոսի հետ միավորվելու օգտին։ Սիդկի—Բևին պայմանագրի Սուդանին վերաբերող դրույթը, որում խոսվում էր և՛ Նեղոսի հովտի միասնության, և՛ ապագայում սուդանյան ժողովրդին ինքնորոշման իրավունք տալու մասին, կողմերից յուրաքանչյուրը մեկնաբանում էր յուրովի[13]։ Սակայն, երբ 1946 թ. դեկտեմբերի 9-ին Անգլիան հայտարարեց «Սուդանը Եգիպտոսից անջատելու որոշման մասին»[14], Սիդկիի կառավարությանը հրաժարական տալուց բացի որևէ այլընտրանք չմնաց։

1947 թ. սկզբին Արաբական երկրների լիգան մի քանի անգամ հայտարարություններ արեց սուդանյան խնդրում իր դիրքորոշման վերաբերյալ։ Հունվարի 7-ի հայտարարությունում շեշտվում էր, որ «Եգիպտոսից անջատվելու պահանջը Սուդանին չի օգնի անկախություն ձեռք բերել»[15]։ Լիգան գտնում էր նաև, որ «Եգիպտոսից Սուդանի անջատման կողմնակիցներն օգնում են իմպերիալիզմին մնալու Սուդանում և դրա համար էլ Լիգան չի կարող աջակցել նրանց»[16]։ Հունվարի 19-ին հրապարակված հայտարարությունում խոսվում էր սուդանյան խնդրի լուծման եգիպտական առաջարկների և դրանց նկատմամբ Լիգայի վերաբերմունքի մասին։ Հայտարարությունում ասվում էր, որ Եգիպտոսը դեմ չէ սուդանյան ժողովրդին ինքնորոշման իրավունք տալուն, բայց այդ իրավունքը «պետք է հիմնվի ազատության և կողմնակի ազդեցության... գործոնների բացակայության հիման վրա...»[17]։ Եգիպտոսը պատրաստակամություն էր հայտնում համաձայնել Սուդանի ապագա ստատուսի վերաբերյալ հանրաքվե անցկացնելուն, պայմանով, որ «մինչ այդ իրականացվի ամբողջական էվակուացիա (անգլիական զորքերի—Շ. Կ.) և վերանան ճնշում գործադրելու բոլոր միջոցները, որոնք այժմ գտնվում են անգլիացիների ձեռքին»[18]։ Սակայն սուդանյան հարցում Արաբական երկրների լիգայի դիրքորոշումն ուներ նաև բացասական երանգ։ Բանն այն է, որ Լիգան ոչ միայն հստակորեն չէր սահմանազատվում «եգիպտական թագի հովանու ներքո» Սուդանի և Եգիպտոսի միավորման դրույթից, այլև հանդես էր գալիս դրա պաշտպանությամբ։ Իսկ այդ դրույթին հետևում էին Եգիպտոսի հետադիմական տարրերը, հակադրվելով Նեղոսի հովտի միասնության լոզունգը դեմոկրատական դիրքերից պաշտպանողներին, որոնք միասնություն ասելով հասկանում էին առաջին հերթին «երկու եղբայրական երկրների՝ Եգիպտոսի և Սուդանի ժողովուրդների միացյալ ճակատ՝ ուղղված անգլիական իմպերիալիստների դեմ»[19]։

---

12 «Политика Англии на Ближнем и Среднем Востоке», М., 1966, с. 48.

13 *Սուդանյան հարցի մասին ավելի մանրամասն տե՛ս* Б. Г. Сейранян, *նշվ. աշխ., էջ 115—117*; В. Б. Луцкий, *նշվ. աշխ., էջ 13—17*; «Политика Англии на Ближнем и Среднем Востоке», с. 48—50.

14 Б. Г. Сейранян, *նշվ. աշխ., էջ 137։*

15 ЦГАОР, ф. 4459, оп. 27/1, д. 6701, л. 6.

16 *Նույն տեղում։*

17 *Նույն տեղում, թ. 13։*

18 *Նույն տեղում, թ. 12։*

19 Б. Г. Сейранян, *նշվ. աշխ., էջ 166։*

Ինչևէ, սուդանյան հարցի լուծման վերը հիշված պլանն անգլիացիները մերժեցին։ Լոնդոնը մտադիր չէր զիջումներ տալ ոչ սուդանյան խնդրում, ոչ էլ Նեղոսի հովտից իր զորքերը դուրս բերելու հարցում։ Ճիշտ է, հակաանգլիական ուժեղ տրամադրությունները գոնե մասնակիորեն թուլացնելու նպատակով Լոնդոնը 1946 թ. հուլիս—1947 թ. մարտ ամիսների ընթացքում իր զորամիավորումները ետ քաշեց Կահիրեից, Ալեքսանդրիայից և Եգիպտոսի այլ շրջաններից, դրանք կոնկրետացնելով Սուեզի ջրանցքի գոտում, բայց դրանով անգլո-եգիպտական կոնֆլիկտի սրությունը ամենևին էլ չվերացավ։

Եգիպտոսի վարչապետի պաշտոնում Ի. Սիդկիին փոխարինած Մահմուդ Նուքրաշին դեռ 1946 թ. դեկտեմբերին հայտարարեց անգլո-եգիպտական կոնֆլիկտը ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ մտցնելու իր կառավարության մտադրության մասին։ Արաբական երկրների լիգայի խորհրդի՝ 1947 թ. մարտին տեղի ունեցած նստաշրջանում նշվեց, որ անգլո-եգիպտական բանակցությունների անարդյունավետությունն է Եգիպտոսին ստիպում դիմել ՄԱԿ-ին։ Միաժամանակ նստաշրջանը պահանջեց «անգլիական զորքերի ամբողջական և անհապաղ էվակուացիա և եգիպտական թագի ներքո Նեղոսի հովտի միասնություն»[20]։ 1947 թ. հուլիսին եգիպտական կառավարությունը պաշտոնապես դիմեց ՄԱԿ-ին՝ անգլո-եգիպտական հարցը Անվտանգության խորհրդում քննարկելու համար։ Օգոստոս և սեպտեմբեր ամիսներին Անվտանգության խորհուրդը մանրամասն քննարկեց այդ հարցը, սակայն արևմտյան և մի շարք այլ երկրների անգլոմետ դիրքորոշման պատճառով հնարավոր չեղավ որևէ որոշում կայացնել։ Միայն Սովետական Միությունը, Լեհաստանը և Սիրիան էին հետևողականորեն պաշտպանում Եգիպտոսի պահանջը՝ անգլիական զորքերի դուրս բերման մասին։ Ի վերջո Անվտանգության խորհուրդն անորոշ ժամանակով հետաձգեց հարցի քննարկումը[21]։ 1947 թ. սեպտեմբերի 20-ին Արաբական երկրների լիգայի Քաղաքական կոմիտեն Անվտանգության խորհրդի կողմից անգլո-եգիպտական կոնֆլիկտը չլուծվելու կապակցությամբ իր ափսոսանքն հայտնեց և նշեց, որ այդ հարցի անիրավացի լուծումը կարող է «վտանգել արաբական բոլոր երկրների անվտանգությունն ու խաղաղությունը»[22]։ Արաբական երկրների լիգայի խորհրդի հոկտեմբերին տեղի ունեցած նստաշրջանը մեկ անգամ ևս հանդես եկավ Եգիպտոսի պահանջների պաշտպանությամբ[23]։ Դրանից հետո մոտ երեք տարի Արաբական լիգան չանդրադարձավ անգլո-եգիպտական կոնֆլիկտին։ Արդեն 1947 թ. վերջից արաբական աշխարհի ուշադրությունը կենտրոնացվեց Պաղեստինին։ Իմպերիալիստական տերությունների ջանքերով հրահրված արաբա-իսրայելական պատերազմը սուժամանակ երկրորդ պլան մղեց արաբական ժողովուրդներին հուզող մյուս բոլոր խնդիրները, ի թիվս այլոց՝ Եգիպտոսից անգլիական զորամիավորումների դուրս բերման հարցը։ Իսկ այդ պատերազմում արաբական երկրների կրած անհաջողությունը որոշ ժամանակով անդամալուծեց Արաբական արևելքի երկրներում ծավալվող ազգային-ազատագրական շարժումը։ Այս իրադարձությունները, բնականաբար, ազդում էին նաև Արաբական երկրների լիգայի գործունեության վրա։ Միայն 1950 թ. Լիգան սկսեց նորից ակտիվացնել իր գործունեությունը։ 1950 թ. նոյեմբերին ԱՄՆ կատարած այցելության ժամանակ Լիգայի գլխավոր քարտուղար Ա. Ազզամը հայտարարեց, որ «Մեծ Բրիտանիան, եթե չի ցանկանում, որ Եգիպտոսը դառնա արյունալի հուզումների և միջադեպերի թատերաբեմ, ապա պարտավոր է իր զորքերը ետ քաշել Սուեզի ջրանցքի գոտուց»[24]։

---

[20] ЦГАОР, ф. 4459, оп. 27/1, д. 6701, л. 55.

[21] В. Б. Луцкий, *նշվ. աշխ., էջ 24—30*; Б. Г. Сейранян, *նշվ. աշխ., էջ 138—140*.

[22] „Cahiers de l' orient contemporain", Paris, 1947, XI—XII, p. 203.

[23] الاهرام ، ١٦ -- ١٠ — ١٩٤٧

[24] „Cahiers de l' orient contemporain", Paris, 1950, XXII, p. 186.

1950 թ. սկզբին Եգիպտոսում տեղի ունեցած պառլամենտական ընտրություններում հաղթանակեց Վաֆդ կուսակցությունը, որի առաջնորդ Մուստաֆա Նահհասն էլ հոկտեմբերի 12-ից սկսեց գլխավորել կառավարությունը։ Նոր կառավարության առջև դրված կարևորագույն խնդիրը շարունակում էր մնալ երկրից օտարերկրյա զորքերի դուրս բերումը։ Սակայն Նահհասը երկար ժամանակ փորձում էր խնդրի լուծմանը հասնել անգլո-եգիպտական երկկողմանի բանակցությունների միջոցով։ Ավելի քան մեկ և կես տարվա ընթացքում տեղի ունեցած տարբեր մակարդակի խորհրդակցությունները, սակայն, նորից համաձայնության չհանգեցրին։ Այդ ընթացքում վաֆդական կառավարությունը կորցրեց վստահությունը ժողովրդական զանգվածների շրջանում։ Վաֆդական կառավարության հեղինակությունը հնարավոր էր վերականգնել միայն 1936 թ. անգլո-եգիպտական պայմանագիրը չեղյալ հայտարարելու միջոցով[25]։ Այդ իսկ պատճառով 1951 թ. հոկտեմբերի 8-ին Նահհասը հայտարարեց այդ պայմանագիրը չեղյալ համարելու Եգիպտոսի կառավարության որոշման մասին։ Մեկ օր անց Արաբական երկրների լիգայի Քաղաքական կոմիտեն հանդես եկավ Նահհասի կառավարության այդ քայլի պաշտպանությամբ և կրկին հավաստեց Լիգայի աջակցությունը Եգիպտոսի ազգային պահանջներին[26]։ Քաղաքական կոմիտեի այս հայտարարությունը կարևոր նշանակություն ուներ. այն ցույց էր տալիս, որ Կահիրեի այդ որոշումն արժանանում է արաբական բոլոր երկրների հավանությանը։ Իսկ վերջիններիս համերաշխությունը Եգիպտոսի հետ այն կարևոր գործոններից մեկն էր, որը Նահհասի կառավարությանն օգնեց դրսևորել կայունություն և մերժել ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Թուրքիայի կառավարությունների 1951 թ. հոկտեմբերի 13-ի առաջարկը՝ «մերձավորարևելյան հրամանատարություն» ստեղծելու մասին։ Այդ առաջարկի ընդունումը փաստորեն կնշանակեր Սուեզի ջրանցքի գոտու անգլիական օկուպացումը փոխարինել իմպերիալիստական երկրների համատեղ օկուպացմամբ։ Հոկտեմբերի 15-ին եգիպտական պառլամենտի երկու պալատներն էլ հաստատեցին 1936 թ. անգլո-եգիպտական պայմանագիրը չեղյալ հայտարարելու մասին օրինագիծը։ Լոնդոնը, սակայն, անտեսեց Եգիպտոսի այդ քայլը, իսկ 1951 թ. հոկտեմբերին անգլիական զորամիավորումների դեմ սկսված պարտիզանական պայքարից հետո Սուեզի ջրանցքի գոտում գտնվող անգլիական զինվորների թիվը գնալով աճեց։ 1951 թ. դեկտեմբերին Արաբական երկրների լիգայի գլխավոր քարտուղար Ազզամը, անդրադառնալով «եգիպտական հայրենասերներին» և անգլիական զորամիավորումների միջև սկսված բախումներին, հայտարարեց, որ դրանք «նախանշանն են այն ճգնաժամային իրավիճակի, որ կարող է պայթել ցանկացած ժամանակ»[27]։ Նրա համոզմամբ, «ո՛չ Սուեզի ջրանցքի գոտին ազատ աշխարհի շահերից ելնելով պաշտպանելու առիթը, ո՛չ էլ Եգիպտոսը սովետական նախահարձակումից պաշտպանելու շինծու պնդումը չեն կարող երբևէ թուլացնել եգիպտական ժողովրդի վճռականությունը՝ վերացնելու երկրի օկուպացումը օտարերկրյա ուժերի կողմից»[28]։

Անգլո-եգիպտական կոնֆլիկտի լուծման համար ավելի նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Եգիպտոսում 1952 թ. հուլիսյան հեղափոխության հաղթանակից հետո։ Ինչպես նշում են Ի. Բելյաևն ու Ե. Պրիմակովը, «հեղափոխության ղեկավարման խորհուրդն իր առջև խնդիր դրեց Եգիպտոսի տարածքից անգլիական զորքերի դուրս բերմանը հասնել ամենակարճ ժամկե-

---

[25] 1950—1951 թթ. իրադարձությունների մասին ավելի մանրամասն տե՛ս Б. Г. Сейранян, նշվ. աշխ., էջ 156—177։

[26] الاهرام ، ١٠ — ١٠ — ١٩٥١

[27] M. Khalil, The Arab States and the Arab League, Beirut, 1962, Vol. II, p. 87.

[28] Նույն տեղում, էջ 88։

տում»[29]։ Արդեն 1953 թ. փետրվարին ստորագրվեց Սուդանի վերաբերյալ անգլո-եգիպտական համաձայնագիրը, ըստ որի նախատեսվում էր երեք տարվա անցումային շրջանի ընթացքում օտարերկրյա զորքերը դուրս բերել Սուդանից, իսկ այնուհետև միջազգային հսկողության ներքո անցկացնել սահմանադիր ժողովի ընտրություններ, որոնք էլ վերջնականապես կորոշեին Սուդանի ապագա ստատուսը[30]։ Իսկ 1953 թ. ապրիլի 27-ին Կահիրեում պաշտոնապես սկսվեցին անգլո-եգիպտական բանակցությունները՝ Սուեզի ջրանցքի գոտուց անգլիական զորքերի դուրս բերման վերաբերյալ։ Դրանից առաջ եգիպտական ղեկավարությունն անհրաժեշտ համարեց մեկ անգամ ևս Արաբական երկրների լիգայի միջոցով արտահայտել արաբական երկրների համերաշխությունը Եգիպտոսի հետ։ Սակայն արաբական մի շարք երկրների կառավարություններ (Սիրիայի, Իրաքի, Լիբանանի), ամենայն հավանականությամբ Լոնդոնի դրդմամբ, ամեն ինչ արեցին, որպեսզի ապրիլի սկզբներին նախատեսվող Քաղաքական կոմիտեի նստաշրջանը հետաձգվի[31]։ Ի վերջո, մայիսի 9-ին Արաբական երկրների լիգայի Քաղաքական կոմիտեն անդրադարձավ անգլո-եգիպտական կոնֆլիկտին։ Կոմիտեի հրապարակած հայտարարությունում շեշտվում էր, որ երկրի տարածքից օտարերկրյա զորքերի դուրսբերման պահանջը «Եգիպտոսի բնական իրավունքն է, և որ եգիպտական խնդիրը արաբական ողջ աշխարհի խնդիրն է»[32]։ Լիգայի կարծիքով եգիպտական հարցի լուծման ձգձգումը վնասում էր «Արաբական արևելքի խաղաղությանն ու կայունությանը»[33]։ Քաղաքական կոմիտեի այս հայտարարությունը հաստատվեց Լիգայի խորհրդի կողմից և մայիսի 11-ին հրատարակվեց որպես խորհրդի որոշում[34]։

1953 թ. գարնանը սկսված անգլո-եգիպտական բանակցությունների առաջին փուլը որոշ ընդմիջումներով շարունակվեց մինչև հոկտեմբերի վերջը։ Այդ ընթացքում կողմերը հանգուցային մի շարք հարցերում համաձայնության եկան։ Սակայն Սուեզի ջրանցքի գոտու ռազմական բազաները «վերաակտիվացնելու» Անգլիային վերապահվող իրավունքի պայմանների և անգլիական զորքերի դուրս բերումից հետո բազաներում մնացող անգլիական տեխնիկական մասնագետների իրավունքների հարցերի շուրջ կողմերի միջև համաձայնություն չկայացավ[35]։ Եգիպտոսի նոր ղեկավարությունը ցանկանում էր բանակցություններն արագ և արդյունավետ ավարտել, «ոչ առանց հիմքի կարծելով, որ դրանց (բանակցությունների—Շ. Կ.) հաջողությունը կնպաստի լայն զանգվածներում նոր իշխանության ժողովրդականացմանը, հետևաբար դրան (նոր իշխանությանը—Շ. Կ.) կհաղորդի նաև քաղաքական կայունություն, որի կարիքը նա այդ աստիճան զգում էր»[36]։ 1954 թ. հունվարի 10-ին, բանակցությունները վերսկսելու փորձից առաջ, Եգիպտոսի արտաքին գործերի մինիստր Մահմուդ Ֆավզին անգլո-եգիպտական հարցը քննարկման դրեց Արաբական երկրների Լիգայի խորհրդի նստաշրջանում[37]։ Խորհուրդը մտահոգություն հայտնեց Եգիպտոսից օտարերկրյա զորքերի դուրս բերման հարցի չլուծվելու կապակցությամբ և մեկ անգամ էլ իր աջակցությունն արտահայտեց Եգիպտոսին։ Հետաքրքիր է Խորհրդի հայտարարության երկրորդ մասը, որտեղ արաբական

---

29 И. П. Беляев, Е. М. Примаков, Египет: время президента Насера, М., 1974, с. 82.

30 «Политика Англии на Ближнем и Среднем Востоке», с. 68.

31 ЦГАОР, ф. 4459, оп. 27/1, д. 14385, л. 192, 195, 197, 201.

32 الاهرام ، ١٠ — ٥ — ١٩٥٣

33 Նույն տեղում։

34 الاهرام ، ١١ — ٥ — ١٩٥٣

35 «Политика Англии на Ближнем и Среднем Востоке», с. 74.

36 И. П. Беляев, Е. М. Примаков, նշվ. աշխ., էջ 82։

37 „Cahiers de l'orient contemporain", Paris, 1954, XXIX, p. 31.

երկրներին կոչ էր արվում «վերափոխել իրենց քաղաքականությունը... և որեէ օտար երկրի հետ համագործակցություն և բարեկամություն հաստատել միայն արդարության և արժանապատվության հիման վրա»[38]։ Այսպիսով, Արաբական երկրների լիգան ցանկանում էր ընդգծել Եգիպտոսի հետևողական դիրքորոշման ճշտությունը և այն օրինակելի էր համարում արաբական մյուս երկրների համար։

1954 թ. հուլիսին Անգլիան և Եգիպտոսը նախաստորագրեցին անգլիական զորքերի դուրս բերման վերաբերյալ համաձայնագիրը, որը ստորագրվեց և ուժի մեջ մտավ հոկտեմբերի 19-ին։ Այդ համաձայնագիրը «լուծեց գլխավոր խնդիրը՝ ազատել Եգիպտոսը օտարերկրյա օկուպացումից»[39]։ Այդ առթիվ Արաբական երկրների լիգայի խորհուրդը շնորհավորեց Եգիպտոսի կառավարությանը[40]։

Անգլո-եգիպտական վերոհիշյալ համաձայնագրի ստորագրումից հետո Եգիպտոսի առջև ծառացան քաղաքական անկախության ամրապնդման, սոցիալ-տնտեսական զարգացման, արտաքին քաղաքականության սկզբունքների փոփոխման և երկրի պաշտպանունակությունը ամրապնդելու հետ կապված մի շարք խնդիրներ։ 1955 թ. առավել սրություն ստացավ Եգիպտոսի զինված ուժերը նորագույն զենքով ապահովելու հարցը։ Իմպերիալիստական երկրները հրաժարվում էին Եգիպտոսին զենք և զինամթերք վաճառել։ Այդ պայմաններում Եգիպտոսի ղեկավար Գամալ Աբդել Նասերը որոշեց դիմել սոցիալիստական երկրներին։ 1955 թ. սեպտեմբերին Եգիպտոսի և Չեխոսլովակիայի միջև համապատասխան պայմանագիր կնքվեց։ Եգիպտոսի արտաքին քաղաքականության այդ «շրջադարձը... սկսեց գնալով ավելի շատ աջակցություն վայելել Ասիայում և Աֆրիկայում»[41]։ Բնականաբար, արաբական աշխարհը նույնպես անտարբեր չմնաց դրա նկատմամբ։ 1955 թ. հոկտեմբերի 1-ին Արաբական երկրների լիգայի խորհրդի աշնանային նստաշրջանի առաջին իսկ նիստում որոշվեց ողջույնի հեռագիր հղել Գամալ Աբդել Նասերին։ Հեռագրում ուղղակիորեն չէր նշվում սոցիալիստական երկրներից զենք գնելու մասին։ Խորհուրդը, սակայն, ողջունում էր Եգիպտոսի «Վճռական քաղաքականությունը, որն ուղղված էր պաշտպանելու երկրի արժանապատվությունը» և հայտնում էր այդ քաղաքականության հետ արաբական երկրների համերաշխության մասին[42]։ Պատահական չէ, որ համաշխարհային մամուլում Լիգայի հեռագիրն ընկալվեց որպես արաբական երկրների համերաշխության արտահայտություն՝ զենք գնելու հարցում Եգիպտոսի դրսևորած նախաձեռնության հետ[43]։

Եգիպտոսի քաղաքականությունը գնալով ավելի արմատական էր դառնում նաև այլ ոլորտներում։ Դրա արտահայտություններից էր Եգիպտոսի կառավարության 1956 թ. հուլիսի որոշումը Սուեզի ջրանցքի ընկերության ազգայնացման մասին։ Արաբական երկրների լիգայի Քաղաքական կոմիտեն այդ առնչությամբ օգոստոսի 17-ին ընդունեց հատուկ բանաձև, որը նույն օրը հաստատվեց Խորհրդի կողմից։ Դրա առաջին կետում արաբական երկրները պաշտպանում էին Սուեզի ջրանցքի ընկերությունն ազգայնացնելու Եգիպտոսի որոշումը, և ընդգծում էին իրենց համերաշխությունը Եգիպտոսի ձեռնարկած բոլոր միջոցառումների հետ։ Ինչպես հայտնի է, իմպերիալիստական երկրները Սուեզի ջրանցքի ազգայնացումից հետո ուժեղ ճնշում էին գործադ-

---

38 Նույն տեղում, الاهرام ، ١٩٥٤ — ١ — ١١

39 «Политика Англии на Ближнем и Среднем Востоке», с. 86.

40 الاهرام ، ١٩٥٤ — ١٠ — ٣١

41 И. П. Беляев, Е. М. Примаков, նշվ. աշխ., էջ 85։

42 الاهرام ، ١٩٥٥ — ١٠ — ٢

43 „Cahiers de l' orient contemporain", Paris, 1955, XXXII, p. 198; „Middle Eastern Affairs, New York, vol. VI, 1955, 11, p. 366.

րում Եգիպտոսի վրա՝ նպատակ ունենալով չեղյալ հայտարարել տալ Կահիրեի համարձակ որոշումը։ Անգլիան ու Ֆրանսիան, որոնց պատկանում էր ջրանցքի ընկերության բաժնետոմսերի մեծ մասը, սկսեցին զորամիավորումներ կենտրոնացնել Արևելյան Միջերկրականի շրջանում։ Արաբական լիգայի վերը նշված բանաձևի երկրորդ կետում կոչ էր արվում վերջ տալ «այն ճնշմանն ու սպառնալիքներին, որոնց ենթարկվում է Եգիպտոսը» և հիշեցվում էր, որ «միջազգային վեճերը պետք է լուծել Միավորված ազգերի կանոնադրությամբ նախատեսված խաղաղ միջոցներով»[44]։

Օգոստոսի 18-ին Խորհուրդը հաստատեց Քաղաքական կոմիտեի մի նոր որոշում, որը դարձյալ Սուեզի ջրանցքի ազգայնացմանն էր վերաբերում։ Փաստաթղթում արաբական երկրները ողջունում էին Եգիպտոսի պրեզիդենտ Նասերի հայտարարությունը, որում նա հայտնել էր իր կառավարության պատրաստակամությունը՝ ապահովելու ազատ նավարկությունը Սուեզի ջրանցքում և համագործակցելու բոլոր այն երկրների հետ, որոնք օգտագործում են ջրային այդ ուղին։ Որոշման վերջում ընդգծվում էր, որ «արաբական որևէ երկրի սուվերենության դեմ նախահարձակումը կհամարվի որպես արաբական բոլոր երկրների դեմ գործված նախահարձակում»[45]։ Արաբական լիգայի այս քայլերը բարոյապես օգնում էին Եգիպտոսին՝ իր քաղաքական կուրսը հետևողականորեն շարունակելու և արևմտյան երկրների խարդավանքներին դիմագրավելու գործում։

Սուեզյան ճգնաժամի առաջին իսկ օրերից Անգլիան և Ֆրանսիան ռազմական ցույցեր կատարելու հետ մեկտեղ փորձում էին հարցի իրենց համար դրական լուծման հասնել այլ ճանապարհներով ևս։ Առանձնապես մեծ հույսեր էին կապվում Սուեզի ջրանցքն օգտագործող երկրների՝ Լոնդոնում 1956 թ. օգոստոսի 16-ից 23-ը գումարված կոնֆերանսի հետ։ Սակայն Սովետական Միությունը վիժեցրեց իմպերիալիստական երկրների փորձերը՝ կոնֆերանսն օգտագործել Սուեզի ջրանցքի վրա օտարերկրյա տիրապետությունը վերականգնելու համար[46]։ Արևմտյան երկրները սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, հրավիրելով այսպես կոչված երկրորդ և երրորդ լոնդոնյան կոնֆերանսները, հայտարարեցին Սուեզի ջրանցքն օգտագործողների ասոցիացիա ստեղծելու մասին։ Դրա ստեղծումը «նպատակ էր հետապնդում ջրանցքի վրա վերահսկումը վերադարձնել իմպերիալիստական երկրներին՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ»[47]։ Արաբական երկրների լիգայի Քաղաքական կոմիտեն հոկտեմբերի կեսին անդրադարձավ Սուեզի ջրանցքի ազգայնացման հարցին։ Կոմիտեի որոշումում ասվում էր, որ «Սուեզի ջրանցքի կապակցությամբ ծագած ներկա ճգնաժամը վերաբերում է արաբական բոլոր երկրներին և մի փորձ է գրավելու Սուեզը՝ Եգիպտոսի և արաբական այլ երկրների վրա զինված ճնշում գործադրելու միջոցով, ինչը կվտանգի արաբական երկրների խաղաղությունը, ապահովությունը և սուվերենությունը»[48]։ Միաժամանակ արաբական երկրներն իրենց պատրաստակամությունն էին հայտնում կոնֆլիկտը լուծելու խաղաղ ձևով, բայց այնպես, որ դա «չհակասի Եգիպտոսի ազգային սուվերենությանն ու արաբների ազգային շահերին»[49]։ Այնուհետև որոշումում Սուեզի ջրանցքն օգտագործողների ասոցիացիայի ստեղծումը «անընդունելի» էր համարվում և դատապարտվում էր «Անգլիայի ու Ֆրանսիայի սպառնալի մեթոդներն ու քաղաքական, տնտեսական և ռազմական ճնշումը, որոնց նրանք դիմում են իրենց նպատակին հասնելու համար...»[50]։

---

44 M. Khalil, *Նշվ. աշխ. էջ 151։*

45 *Նույն տեղում, էջ 151—152։*

46 «СССР и арабские страны, 1917—1960 гг.», М., 1961, с. 804—805.

47 Л. И. Медведко, К востоку и западу от Суэца, М., 1980, с. 25.

48 M. Khalil, *Նշվ. աշխ., էջ 152։*

49 *Նույն տեղում։*

50 *Նույն տեղում, էջ 152—153։*

Տեսնելով, որ ոչ մի սովորական միջոց չի օգնում վերականգնելու իրենց դիրքերը Եգիպտոսում, Անգլիան և Ֆրանսիան Իսրայելի հետ հոկտեմբերի 29—31-ին հարձակվեցին Եգիպտոսի վրա։ Չնայած եգիպտացիների հերոսական դիմադրությանը, անգլո-ֆրանս-իսրայելական անհամեմատ ավելի լավ զինված բանակներն առաջ էին շարժվում դեպի երկրի խորքը։ Սակայն Սովետական Միության, սոցիալիստական մյուս երկրների և զարգացող պետությունների ձեռնարկած միջոցառումները հնարավոր դարձրին նոյեմբերի 7-ին դադարեցնելու ռազմական գործողությունները։ Սովետական կառավարությունն այդ օրերին առաջարկեց «ՄԱԿ-ի մյուս անդամների հետ ռազմածովային և ռազմաօդային ուժեր օգտագործել պատերազմը Եգիպտոսում դադարեցնելու և նախահարձակումը սանձահարելու համար»[51]։ Սուեզյան արկածախնդրությանն անդրադարձած համարյա բոլոր «հետազոտողները համաձիտ են այն բանում, որ Սովետական Միությունը կարևոր, կարելի է ասել վճռական, դեր կատարեց «եռյակ» նախահարձակման ոչ միայն տապալման, այլ նաև նրա հետևանքները համեմատաբար կարճ ժամանակամիջոցում վերացնելու գործում»[52]։ Արդեն 1957 թ. մարտին օտարերկրյա զորքերը հեռացվել էին Եգիպտոսի տարածքից։

Արաբական բոլոր երկրները դատապարտեցին նախահարձակ երկրներին, իսկ նրանց մեծամասնությունը խզեց դիվանագիտական հարաբերությունները Անգլիայի և Ֆրանսիայի հետ։ Սիրիայում պայթեցվեց անգլիական ընկերություններին պատկանող նավթամուղը, իսկ Սաուդյան Արաբիայում արգելվեց նավթի մատակարարումը անգլիական հեղուկանավերին։ Հարձակվելով Եգիպտոսի վրա, իմպերիալիստները չէին հետապնդում միայն Սուեզի ջրանցքն իրենց վերադարձնելու նպատակ, այլև ենթադրում էին տապալել Նասերի առաջադիմական վարչակարգը, հարված հասցնել արաբական ամբողջ ազգային-ազատագրական շարժմանը[53], և, վերջին հաշվով, արմատախիլ անել արաբական երկրների համերաշխությունն ու համագործակցությունը։ Սակայն իմպերիալիստական երկրներն իրենց հաշիվներում սխալվեցին. արաբական երկրների համագործակցությունն ու համերաշխությունը նախահարձակումից հետո ավելի ամրապնդվեց։ Այսպես, նոյեմբերի 13—14-ին Բեյրութում 10 տարվա ընդմիջումից հետո գումարված Արաբական երկրների լիգայի անդամ պետությունների ղեկավարների խորհրդակցությունը, դատապարտելով եռյակ նախահարձակումն ու պահանջելով անմիջապես անգլո-ֆրանս-իսրայելական զորքերը դուրս բերել Եգիպտոսից, հանդես եկավ նաև ֆրանսիական իմպերիալիզմի դեմ ալժիրյան ժողովրդի մղած պայքարի պաշտպանությամբ[54]։

Սակայն հարց է ծագում, թե ինչո՞ւ լիգայի անդամ պետությունները ռազմական օգնություն ցույց չտվեցին Եգիպտոսին, մանավանդ, որ նրանք անդամակցում էին Լիգայի հովանու ներքո կնքված «Համատեղ պաշտպանության» պայմանագրին, իսկ մի շարք երկրներ էլ (օրինակ, Սիրիան և Սաուդյան Արաբիան) Եգիպտոսի հետ ունեին նաև երկկողմանի փոխադարձ օգնության պայմանագրեր։ Նախ նշենք, որ արաբական առանձին երկրներ՝ մասնավորապես Սիրիան և Հորդանանը, հայտնեցին իրենց պատրաստակամությունը մասնակցելու «նախահարձակման ետ մղմանը, սակայն պրեզիդենտ Նասերը նախընտրեց նրանց չներքաշել պատերազմի մեջ՝ լայն ստրատեգիական պատճառներից ելնելով»[55]։ Ամեն դեպքում չի կարելի արդարացված համարել Լիգայի ռազմական մարմինների անգործության փաստը, որը մասամբ պայմա-

---

51 «СССР и арабские страны, 1917—1960 гг.», с. 257.

52 Л. И. Медведко, նշվ. աշխ., էջ 36։

53 նույն տեղում, էջ 28; «Новейшая история арабских стран», М., 1968, с. 418.

54 „Middle Eastern Affairs", vol. VIII, 1957, 2, p. 60—61.

55 " شؤون عربية " ، تونس ، ذار ، (مارس) ، ١٩٨٢ العدد ١١٣ ص ٣٢٨

նավորված էր նաև Բաղդատի պակտի ստեղծումով և դրա նկատմամբ Արաբական երկրների լիգայի անդամների վերաբերմունքով։

1950-ական թվականների առաջին կեսին, երբ նոր էր ստորագրվել միջարաբական «Համատեղ պաշտպանության» պայմանագիրը, Լիգան գործուն միջոցառումներ էր ձեռնարկում դրա դրույթների իրականացման ուղղությամբ։ Սակայն Բաղդատի պակտի ստեղծումից (1955) հետո արաբական մի քանի երկրներ երկկողմանի կամ եռակողմ պաշտպանական պայմանագրեր կնքեցին և գերադասեցին դրանց միջոցով ապահովել իրենց անվտանգությունը։ Դրա արդյունքը եղավ այն, որ փաստորեն «Համատեղ պաշտպանության» պայմանագրի մեխանիզմը դադարեց գործելուց, իսկ երկկողմանի և եռակողմ այլևայլ պայմանագրերի համաձայն ստեղծված նոր մարմիններն էլ անպատրաստ դիմավորեցին եռյակ նախահարձակումը։ Ճիշտ չէր նաև այն, որ Լիգայի անդամ երկրները, այդ թվում նաև Եգիպտոսը, ռեալ չգնահատելով իրադրության հետագա զարգացման հնարավոր տարբերակները, 1956 թ. հուլիսից հետո չձեռնարկեցին Լիգայի ռազմական մեխանիզմը վերականգնելու փորձերը։ Իհարկե, միամտություն կլինի կարծել, թե եռյակ նախահարձակման դեմ արաբական երկրների ռազմական առումով համատեղ հանդես գալը էական ազդեցություն կարող էր թողնել պատերազմական գործողությունների ընթացքի վրա, քանի որ մի կողմում իմպերիալիստական հզոր երկրների մինչև ատամները արդիական զենքով զինված բանակներն էին, իսկ մյուսում՝ փաստորեն կազմավորման պրոցեսում գտնվող, թույլ զինված արաբական բանակները։ Սակայն արաբական երկրների մասնակցությունը պատերազմին, բացի բարոյաքաղաքական կարևոր դեր կատարելուց, անչափ ուսանելի կլիներ նախահարձակների՝ մանավանդ Իսրայելի համար։ Ինչևէ, այս բոլորը չպետք է խանգարի, որպեսզի նշվի սուեզյան ճգնաժամի տարբեր փուլերում Արաբական երկրների լիգայի ակտիվության կարևորությունը։

Արաբական երկրների լիգայի 1945—1956 թթ. գործունեությունը Եգիպտոսից օտարերկրյա զորքերի դուրս բերման և երկրի անկախության ամրապնդման ուղղությամբ չնայած որոշ անհետևողականությանը (մանավանդ 1940-ական թվականներին), այնուամենայնիվ, զգալիորեն նպաստեց եգիպտական ժողովրդի ազգային-ազատագրական շարժման առաջընթացին։

АРАБСКАЯ ЛИГА И БОРЬБА ЕГИПТА ЗА ЗАВОЕВАНИЕ И УКРЕПЛЕНИЕ НЕЗАВИСИМОСТИ (1945—1956)

ШАГЕН КАРАМАНУКЯН

Резюме

Солидарность арабских стран с национально-освободительной борьбой египетского народа в 40—50-е годы проявилась главным образом посредством деятельности Лиги арабских государств. Эта межарабская региональная организация солидаризировалась с требованием Египта о выводе английских войск из страны. После июльской революции 1952 г. Арабская лига поддерживала независимый антиимпериалистический внешнеполитический курс нового руководства страны. Государства—члены Лиги единодушно выступили в защиту решения египетского правительства о национализации Суэцкого канала и решительно осудили развязанную в октябре-ноябре 1956 г. Англией, Францией и Израилем тройственную агрессию.